ՔԱՂՎԱԾՔՆԵՐ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

1958 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի ՆԻՍՏԻՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ սույն նիստում կարդացվեց Վրաստանի հայոց թեմական խորհրդի նամակը՝ Թբիլիսիի հայոց Ս. Գևորգ եկեղեցու վերանորոգության մասին։

Ժողովը հավանություն տվեց թեմական խորհրդի դիմումին և որոշեց Թբիլիսիի Հայոց Ս. Գևորգ եկեղեցու վերանորոգության համար հատկացնել 46 000 ռուբլի՝ թեմի 1958 թվականի ծախսերի հաշվին։

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ իր սույն նիստում քննեց նաև «Էջմիածին» ամսագրի խմբագրության առաջարկը, Մայր Աթոռի կյանքը և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու գործունեությունը քրիստոնեական քույր եկեղեցիներին ծանոթացնելու նպատակով, առաջիկայում, Մայր Աթոռի տպարանի հաստատումից հետո, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով տարեկան 3—4 համար մի պարբերաթերթ հրատարակելու մասին, որպես հավելվածական հրատարակություն «Էջմիածին» ամսագրի։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը հավանություն տվեց խմբագրության առաջարկին։

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ իր սույն նիստում վավերացրեց Հոգևոր Ճեմարանի 1958—1959 թվականի ուսումնական նոր տարվա դասախոսական կազմը։

1958 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի ՆԻՍՏԻՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ սույն նիստում կարդացվեցին վրահայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս սրբազանի և Շիրակի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետի դիմումները իրենց թեմերի կարիքների համար, թեմական բյուջեի հաշվին, մարդատար ավտոմեքենաներ ունենալու մասին։ Գերագույն Հոգևոր Խորհուրդը որոշեց բավարարել այս դիմումները։

1958 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ՆԻՍՏԻՑ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ ՀԻՍՆԱՄՅԱԿԻ և գահակալության երրորդ տարեդարձի բարեբաստիկ առիթով, Գերագույն Հոգևոր Խորհուրդը որոշեց Վեհափառ Հայրապետին նվիրել հայրապետական ոսկեձույլ և ադամանդակուռ ԱՐԾԻՎ, հայկական ոճով և Երևանի հայ ոսկերիչների ձեռքով պատրաստված, և նվերը հանձնել հոկտեմբերի 12-ին, Մաղկյա դահլիճում, պաշտոնական շնորհավորությանց ժամանակ։

1958 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ՆԻՍՏԻՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ նիստում կարդացվեց Երուսաղեմի Միաբանական ընդհանուր ժողովի միջնորդագիրը, Բաղդադի առաջնորդ հոգեշնորհ Տ. Զգոն ծայրագույն վարդապետ Տեր-Հակոբյանին եպիսկոպոս ձեռնադրելու մասին։ Գերագույն Հոգևոր Խորհուրդը որոշեց հարգել Երուսաղեմի միաբանության միջնորդագիրը և խնդրել Վեհափառ Հայրապետին՝ հոկտեմբերի 19-ին, կիրակի օրը, եպիսկոպոս ձեռնադրել Տ. Զգոն ծայրագույն վարդապետին։

1958 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 4-Ի ՆԻՍՏԻՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ այսօրվա նիստում լսվեց Վեհափառ Հայրապետի զեկուցումը հոբելյանական հանդիսությունների անցկացման և Մայր Աթոռում հոկտեմբերի 16—23 օրերին գումարված եպիսկոպոսական ժողովի մասին։ Գերագույն Հոգևոր Խորհուրդը խորունկ գոհունակություն արձանագրեց Վեհափառ Հայրապետի զեկուցման առթիվ։

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ սույն նիստում կարդացվեց հունահայ թեմի Ազգային կենտրոնական վարչության 11 հոկտեմբեր թվակիր նամակը, հունահայ թեմը Ս. Էջմիածնից բաժանելու և Անթիլիասին ենթարկելու փորձի մասին։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը քննության առնելով հունահայ թեմը Մայր Աթոռ Ս. Էջմիածնից բաժանելու փորձի մասին վերոհիշյալ նամակը, Ազգային կենտրոնական վարչության որոշումը գտավ հակականոնական և այն համարեց չեղյալ։

1958 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի ՆԻՍՏԻՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ սույն նիստում լսվեց Վեհափառ Հայրապետի ծննդյան հիսնամյակի և Գահակալության երրորդ տարեդարձի հոբելյանական հանդիսությունները անցկացնող Կենտրոնական հոբելյանական հանձնաժողովի նախագահ պրոֆ.-դոկտ. Ա. Ղարիբյանի զեկուցումը՝ հանդիսությունների կազմակերպման և անցկացման արդյունքների մասին։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը գոհունակությամբ արձանագրեց, որ հոբելյանական հանդիսությունները անցան պատշաճ վայելչությամբ և հաջողությամբ։

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ սույն նիստում քննության առնվեց Մայր Աթոռում գումարված եպիսկոպոսական ժողովի կատարած դիտողությունների և ճշտումների վրա սրբագրված Սահմանադրության նախագիծը։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը հետ քննության որոշեց հավանություն տալ Սահմանադրության նախագծին, այն ուղարկել բոլոր նվիրապետական Աթոռներին և թեմերին, հրատարակել մամուլում և ենթարկել համաժողովրդական քննարկման։ Սահմանադրության նախագծի շուրջ արված վերջին դիտողությունների և սրբագրությունների հիման վրա, խմբագրել վերջնական նախագիծ և այն ներկայացնել 1960 թվականի Ազգային-Եկեղեցական ժողովի քննությանն ու հաստատմանը։